

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն տեղեկատվություն է ներկայացնում 2018 թվականի հունվար-դեկտեմբերի (այդ թվում՝ դեկտեմբերի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

**ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**


**2018թ. դեկտեմբերի ամսական և 2018թ. հունվար - դեկտեմբերի (աճողական) արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները**

	<i>Չափի միավոր</i>	2018թ. դեկտեմբեր	2018թ. դեկտեմբերը 2017թ. դեկտեմբերի նկատմամբ, %	2018թ. դեկտեմբերը նոյեմբերի նկատմամբ, %	2018թ. հունվար-դեկտեմբեր	2018թ. հունվար-դեկտեմբերը 2017թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
<b>Տնտեսական ակտիվության ցուցանիշը</b>	%	x	106.4	124.3	x	105.8
<b>Արդյունաբերական արտադրանքի ծավալը</b>	<i>մլն.դրամ</i>	174 287.1	105.5	112.5	1 737 685.6	104.3
<b>Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը</b>	<i>մլն.դրամ</i>	94 389.1	98.0	122.1	889 708.6	92.4
<b>Շինարարության ծավալը</b>	<i>մլն.դրամ</i>	86 556.0	101.2	184.7	422 302.0	104.5
<b>Առևտրի շրջանառությունը</b>	<i>մլն.դրամ</i>	359 185.7	104.8	134.1	2 931 494.8	108.7
<b>Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)</b>	<i>մլն.դրամ</i>	181 478.8	122.2	115.7	1 764 751.2	118.8
<b>Մպառողական գների ինդեքսը</b>	%	x	101.8	101.5	x	102.5
<b>Էլեկտրաէներգիայի արտադրությունը</b>	<i>մլն.կՎտ.ժ</i>	671.5	81.3	99.3	7 776.9	100.2
<b>Միջին ամսական անվանական աշխատավարձը*</b>	<i>դրամ</i>	208 868	102.0	123.4	172 357	103.8
<b>Արտաքին առևտրաշրջանառությունը</b>	<i>մլն.դոլար</i>	650.9	94.4	92.3	7 375.1	116.4
	<i>մլրդ.դրամ</i>	315.5	x	x	3 562.7	x
<i>այդ թվում՝</i>						
արտահանում	<i>մլն.դոլար</i>	208.0	89.4	102.6	2 411.9	107.8
	<i>մլրդ.դրամ</i>	100.8	x	x	1 164.9	x
ներմուծում	<i>մլն.դոլար</i>	442.9	97.0	88.2	4 963.2	121.1
	<i>մլրդ.դրամ</i>	214.7	x	x	2 397.8	x

\* Այստեղ և հետայսու՝ ամսական ցուցանիշները ներառում են նաև փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները, քանզի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2017թ-ի 1582-Ն որոշման համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեին հասանելի է դարձել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) տվյալների բազան ամսական կտրվածքով և տեղի է ունեցել տեղեկատվական աղբյուրի փոփոխություն (հետայսու՝ օգտագործվելու է տեղեկատվական նոր աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ-ի վարչական ռեգիստրի ամսական տվյալները): Մինչ տեղեկատվական աղբյուրի փոփոխությունը ամսական ցուցանիշները չէին ներառում փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները: Փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները հավաքագրվում էին տարին մեկ անգամ և արտացոլվում էին միայն տարեկան ցուցանիշներում:

Ստորև բերվում են գծանկարներ (ռադարներ), որոնք նկարագրում են ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները.

**Ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները 2018 և 2017թթ. դեկտեմբեր ամիսներին**  
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



**Ապրանքների և ծառայությունների արտադրության փոփոխությունները 2018 և 2017 թթ. հունվար-դեկտեմբերին**  
(նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %)

